



16(518)
25.06.2018
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զինաստիճանը և զխրապ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар ♦

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

♦ Lusarar

ՔՈՒՇԵՐԻ ՆԱԿԱՏԱՐՄԱԳՐՈՒԽՆ ԿՍԿԱՆ Ե



Կրթության որակի արտաքին ապահովումն իրականացվում է պետական հավատարմագրման միջոցով:

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը՝ ՈԱԱԿ, արտաքին գնահատում կիրականացնի Արցախի բուհերում: Գործընթացն արդեն սկսված է: Այդ մասին ազդարարեց ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը հունիսի 18-ին ԱրԴՌ-ում կայացած հանդիպման ժամանակ, որին հրավիրված էին ՈԱԱԿ մասնագետները՝ տնօրեն Ռուբեն Թովմյանի գլխավորությամբ, և ներկա էին Արցախում գործող բուհերի ղեկավարները, պրոֆեսորադասախոսական համակազմի ներկայացուցիչներ:

Բացելով հանդիպումը՝ ԿԳՍ ԳԱ-

խարար Նարինե Աղաբալյանն ասաց, որ ԱՀ կառավարությունը 2017թ. դեկտեմբերի 5-ի երկու որոշումով հաստատվել են Արցախում մասնագիտական կրթության մասին օրենսդրական ակտերի իրականացումը ուսումնական հաստատությունների պետական հավատարմագրումը բուհի հաստատության վկայական է: Ուստի նախքան հաստատության հայտ ներկայացնելը պետք է անցնեն մի քանի փուլեր: Հավատարմագրման գործընթացի ելքերը, բուհերի կատարելիք քայլերը ներկայացրեց ՈԱԱԿ-ի տնօրեն Ռ. Թովմյանը:

Հավատարմագրումը բուհի հաստատության վկայական է: Ուստի նախքան հաստատության հայտ ներկայացնելը պետք է անցնեն մի քանի փուլեր: Հավատարմագրման գործընթացի ելքերը, բուհերի կատարելիք քայլերը ներկայացրեց ՈԱԱԿ-ի տնօրեն Ռ. Թովմյանը:

Հավատարմագրումը շնորհիվում է որոշակի ժամկետով՝ հավաստելով, որ ուսումնական հաստատությունը կամ կրթական ծրագրերն ունեն անհրաժեշտ կարողություն տվյալ ժամանակահատվածում երաշխավորված որակով կրթական գործունեություն իրականացնելու համար:

Հավատարմագրումը ենթադրում է, որ ուսումնական հաստատությունն ապահովված է այն չափանիշներով, որոնք շրջանակարգին հնարավորության են տալիս ձեռք բերել անհրաժեշտ որակավորում մասնագիտական կրթության ոլորտում առաջընթաց ունենալու համար:

Հավատարմագրումը իրականացվում է երկու գործընթացով՝ ինտիտուցիոնալ (կառուցվածքային) և մասնագիտական կրթական ծրագրերի:

Վում է 3 փուլով՝ ինքնավերլուծություն, փորձաքննություն, որոշման կայացում:

Ինքնավերլուծությունը հաստատության կամ ծրագրի ինքնավերլուծության գործընթաց է, որի արդյունքում պատրաստվում է զեկույց՝ հիմնված կառավարության կողմից սահմանված չափանիշների վրա:

Փորձաքննությունը անկախ փորձագետների կողմից ինքնավերլուծության և կից ներկայացված հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրություն է և այց ուսհաստատություն: Այցի ժամանակ տեղի են ունենում հանդիպումներ վարչական, պրոֆեսորադասախոսական համակազմի, ուսանողության ներկայացուցիչների, գործատուների հետ. արդյունքում պատրաստվում է փորձագիտական զեկույց, որը ներառում է գնահատական, ինչպես նաև խորհրդատվություններ բարելավման վերաբերյալ:

Ինչո՞ւ է անհրաժեշտ, որ մասնագիտական ուսումնական հաստատությունը (ՄՈՒՀ) հավատարմագրվի որպեսզի հավաստի, որ իր մատուցած կրթության որակը համապատասխանում է պետական ու միջազգային պահանջներին, դիմորդին երաշխավորի, որ կատանա որակյալ և պահանջված կրթություն, կդառնա միջազգայնորեն ճանաչված:

Հավատարմագրումը փաստորեն հավաստում է, թե ինչքանով է ապավորված համապատասխանում արածին: Չհավատարմագրված բուհերի

որակավորումները չեն ճանաչվում: Սեկուկեն տարի կա մինչև սահմանված ժամկետը, բայց դա շատ չէ, և չպետք է հապաղել, քանի որ հավատարմագրման գործընթացը ենթադրում է մեծ ծավալի աշխատանք բուհի ներսում, նշեց ՈԱԱԿ-ի տնօրենը:

ՈԱԱԿ-ը Հայաստանում հիմնադրվել է 2008թ. նոյեմբերին, 2011թ. հաստատվել են որակի ապահովման ինստիտուցիոնալ և ծրագրային չափանիշները:

Ռ. Թովմյանը ներկայացրեց, թե ինչ պետք է անել, ինչ քայլերով առաջ շարժվել: Նա պարզաբանեց հավատարմագրման գործընթացի ելքերը և ակնկալիքները բուհերից մոտակա ժամանակներում մինչև ցրանց դիմելը հավատարմագրման: Մինչև զեկույց, որը ներառում է գնահատական, ինչպես նաև խորհրդատվություններ բարելավման վերաբերյալ: Ինչո՞ւ է անհրաժեշտ, որ մասնագիտական ուսումնական հաստատությունը (ՄՈՒՀ) հավատարմագրվի որպեսզի հավաստի, որ իր մատուցած կրթության որակը համապատասխանում է պետական ու միջազգային պահանջներին, դիմորդին երաշխավորի, որ կատանա որակյալ և պահանջված կրթություն, կդառնա միջազգայնորեն ճանաչված:

Հավատարմագրումը փաստորեն հավաստում է, թե ինչքանով է ապավորված համապատասխանում արածին: Չհավատարմագրված բուհերի



Մրցանակաբախտություն

Արդեն 8-րդ անգամ տարվա այս ժամանակ, չնայած դպրոցականներն ամառային արձակուրդում են, իսկ մի մասն էլ հանձնում է քննություններ, Արցախի տարբեր բնակավայրերից ցրանց հավաքվում են մայրաքաղաքում՝ մաթեմատիկական «Կենգուրու», 6-րդ անգամ ռուսերենից՝ «Ռուսական արջուկ», 4-րդ անգամ հայերենից՝ «Մեղու» մրցույթների մրցանակաբաշխության 2017-2018 ուստարվա արարողության մասնակցի պատվին արժանացած լինելու առաքելությամբ: «Այբ» կրթական հիմնադրամի և ԱՀ ԿԳՍ և նախաձեռնությամբ անցկացվող այս մրցույթներին մասնակցում է 2-12-րդ դասարանների ավելի քան 5000 աշակերտ: Ինտեռնետուպ հզոր շարժում, որ միավորել է տվյալ առարկաների նկատմամբ հետաքրքրություն ու սեր ցուցաբերող դպրոցականների մեծ բանակի, որի անդամները փոքրուց սովորում են իրենց մտավոր կարողությունները չափել ազնիվ, անաչառ, թափանցիկ մրցապայքարում, սովորում՝ ինչպես կարելի է հաղթել և ինչպես՝ չի կարելի, սովորում դառնալ անկողողալուելի հարստության՝ գիտելիքի կրողներ:

Հունիսի 15-16-ը Ստեփանակերտի Ա. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոցի դասիչը հերթական անգամ հյուրընկալեց «Այբ»-ի մրցույթների մրցանակակիրներին, նրանց դպրոցների ներկայացուցիչներին, ծնողներին: Ներկաներին շնորհավորեց ԱՀ կրթության, գիտության և սպորտի փոխնախարար Սիբայել Գամբարձումյանը: Նա ասաց, որ այս մրցույթները ստրեքտարի ընդլայնում են մասնակց դպրոցականների շարքերը: Կազմակերպչական պատճառներով միայն «Ռուսական արջուկ»-ն է ընդգրկում մայրաքաղաքի դպրոցների աշակերտներին՝ շուրջ 350 հոգի, իսկ մյուս երկու մրցույթներին ակտիվորեն մասնակցում են նաև շրջանների երեխաները՝ մոտ 2400-ական: 103 դպրոցներից: Նշենք, որ մրցանակաբաշխության առաջին օրվա առաջին մասը տեղի է ունե-

ցել Բերձորում: Քաշաթաղի շրջանի շուրջ 40 դպրոցականների համար: Ընդհանուր առմամբ, այդ երեք մրցույթներից արցախցի դպրոցականները ձեռք են բերել շուրջ 220 մրցանակ, որից լավագույն արդյունք՝ ավելի քան 50:



Փոխնախարարը ցավով նշեց, որ Արցախից դեռ բացարձակ հաղթող չունենք՝ չնայած մոտ են այդ ցուցանիշին: Այսպես, ֆիզմաթ դպրոցի 8-րդ դասարանի աշակերտ Տիգրան Կսիս-բեկյանը արդեն 6-րդ անգամ լավագույն արդյունք է ցուցաբերել: «Կենգուրու»-ում, բայց դարձյալ քիչ միավորների տարբերությամբ չի անցել հաղթողի շեմը:

«Այբ» հիմնադրամի մրցույթների ծրագրերի ղեկավար Շուշան Կարապետյանը նախ տեղեկություններ տվեց մրցույթների մասին:

«Այբ»-ը հիմնադրվել է 2006թ. մարդկանց կողմից, որոնք գնահատում և արժևորում են լավ կրթությունը: Նպատակն է օրինակելի ծրագրերի միջոցով, պետական կառույցների հետ համագործակցելով՝ քայլ առ քայլ բարձրացնել կրթության որակը: «Այբ»-ի հիմնադիրների նպատակն է ստեղծել օրինակելի կրթական միջավայր՝ ազգային հարուստ կրթական ժառանգության և հանաշխարհ

ային առաջատար փորձի համադրությամբ: Մրցույթները «Այբ» հիմնադրամի խոշոր ծրագրերից են:

«Կենգուրու», «Մեղու» և «Ռուսական արջուկ» մրցույթներից բացի, որոնց արցախցի դպրոցականներն ակտիվորեն մասնակցում են, կան ևս երկուսը: Սենը «Պատանի քննիկուսների համահայկական մրցաշար»-ն է, որը թիմային մրցույթ է, անցկացվում է Երևանում և Արցախից



արդեն երկու: Հաղորտի և Մարտունու դպրոցների թիմերը մասնակցել են: Մյուսը Ռոբոտաշինության համաշխարհային օլիմպիադան է, որին

Արցախը դեռ չի մասնակցում: «Կենգուրու»-ի համար այս տարին հոբեյա-նական է. Հայաստանում այն անցկացվել է 10-րդ, Արցախում՝ 8-րդ անգամ: Մաթեմատիկական այս շարժումն իր մեջ է առել շատերին. այս տարի այն միավորել էր Հայաստանի բոլոր մարզերի և Արցախի շուրջ 44000 դպրոցականների, որոնցից 1646-ը դարձել է մրցանակակիր, իսկ 856-ը՝ գրանցել է լավագույն արդյունք: «Կենգուրու»-ն այս տարի նաև ռեկորդային թվով հաղթող ունի՝ 10 հոգի:

«Ռուսական արջուկ»-ին այս տարի մասնակցել է 9078 աշակերտ՝ ՀՀ և Արցախի 339 դպրոցներից: Մրցույթն այս անգամ հաղթող չունի: «Մեղու»-ն նույնպես մեծ զանգվածայնություն է ձեռք բերել: Ընդհանուր թվով այս տարի մրցույթին մասնակցել է 38743 աշակերտ: Բացարձակ արդյունք գրանցել է մեկ հոգի՝ ՀՀ Արարատի մարզից:

«Մրցույթների նպատակն է բարձրացնել աշակերտների լայն զանգվածների շրջանում հետաքրքրու-

թյունն ուսման հանդեպ, նորովի ներկայացնել այս կամ այն առարկան ու խթանել հայ աշակերտների ակտիվ մասնակցությունը միջազգային ու տեղական հետաքրքիր մրցույթներին:

Շ. Կարապետյանը հավաստագրեց հանձնեց բոլոր մասնակց դպրոցներին և նրանց աշակերտներին, նվերների փաթեթ՝ մրցանակակիրներին, իսկ լավագույն արդյունք ունեցողներին՝ նաև պատվոգիր և մրցույթների խորհրդանիշ-փափուկ խաղալիք, ավագներին՝ նաև խորհրդանշական ուսապատասխաններ: «Կենգուրու»-ին մասնակցած դպրոցներն ու մրցանակակիրներն ստացան «Կենգուրու»-ի խորհրագրերը, բոլորը՝ հորդոր-պահանք՝ շատ լուծել խնդիրներ, ամեն օր լուծել: Դա է հաղթանակին հասնելու ամենակարճ ճանապարհը:

Սեփ. լրատվություն

ԱՄԲԻՆ

ՄԵՆԵ ՈՒՆԵՆԵ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՖԻՑԻՏ

Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները չէին կարող ազդեցություն չունենալ Արցախի վրա: Եթե այսօր շարունակվում են բողոքներն ու ընդվզման առանձին երևույթներ, ապա պետք չէ վախենալ, ավելին, դրանք նույնիսկ անհրաժեշտ են: Հեղափոխությունները և ռադիկալ փոփոխությունները անգամ օրինաչափ ու անհրաժեշտ են քաղաքակրթության ճիշտ զարգացումն ապահովելու համար: Մենք ունենք իշխանափոխության կարիք՝ հաճախ հարցնում են: Հատուկ իշխանափոխության կարիք մենք չունենք: Ունենք կադրային փոփոխությունների ու մեր ներսը փոխելու կարիք, ունենք երկարատև թմբիղից արթնանալու կարիք: Մենք ունենք ինքնախոստովանության կարիք: Ինքնախոստովանության ժամանակներ են: Անանցն ու հավերժականը, հանրային ու ազգային շահի գիտակցումը շատ ու շատ պետական պաշտոնյաների ու ծառայողների համար մնում են որպես պատճառներ: Պաշտոնը անծնական ու ընտանեկան երջանկության համար չէ: Մինչդեռ շատ պաշտոնյաներ դա շարունակում են ընկալել այդպես՝ անանցանելի պատմեցներ կառուցել հանրության ու իրենց միջև: Պետական ծառայությունը նախ և առաջ պատասխանատվություն է: Այն ազդեցություն է,

բայց միշտ չէ, որ առաջնորդություն է: Եթե այսօր ստացվել է այնպես, որ հանրությունը դժգոհ է, ապա առաջնորդող, այսպես ասած, գերատեսչական կառույցները չեն ապահովում առաջնորդության էֆեկտ, որովհետև զբաղված են իրենք իրենցով: Այսօր իսկապես առկա է մարդկանց սոցիալական ինքնության ճգնաժամը, որը սնվում է սոցիալական արդարության ու բարոյականության դեֆիցիտից: Ժողովուրդը դժգոհում ու բողոքում է ոչ այնքան նրանից, որ ինքը վատ է ապրում, այլ՝ թե ինչ ճանապարհով է ձեռք բերվում այս կամ այն անձի հարստությունը կամ պաշտոնը:

Իշխանության իրականացման ցածր մշակույթի պայմաններում առաջանում է լավագույն դեպքում ընդվզում, վատագույն դեպքում՝ ապաթիա (հետաքրքրությունների կորուստ): Ընդամենը լուզունգային քաղաքակառույցները խորացնում է ժողովրդի ու իշխանության միջև անդունդը: «Փորձի ու սխալի» հարցույցն անընդունելի է Արցախի մաս երկրների համար: Դա բերում է ավերիչ անգործության: Փոփոխություններն օրինաչափ են: Բայց մարդիկ խուսափում են խոսել դրանից: Ինչո՞ւ: Եշմարտության ու բարոյականության դեֆիցիտից պետք է խոսենք բոլոր:

Անուններ հնչեցնելը ճիշտ չէ, բայց այսօր շատ դպրոցների ու

մանկապարտեզների տնօրեններ մոնոպոլիայի են վերածել իրենց վստահած կառույց: Ի՞նչ է նշանակում էլիտար դասարանների ձևավորում: Ձեզ հարցո՞ւլ եք՝ ինչու եք դա ուզում: Չնայած այս հարցի պատասխանը ինքներդ ավելի լավ գիտեք: Ո՞վ է ձեզ իրավունք տվել ապակառնել սերճի, ապա հասարակության ներսը: Մենք ֆեոդալական հասարակության մե՞ջ ենք ապրում: Հատկապես կրթության համակարգում վերջ պետք է դրվի տոտալ էլիտարիզմի ցանկացած, անգամ ամենատարրական դրսևորման, ցանկացած բնույթի խտրականության, ինչը կապ չունի ժողովրդավարության արժեքների արդիականացման հետ: Հանրությունը հոգեբանական անկում է ապրում, երբ առնչվում է սոցիալական անարդարության երևույթների, երբ ձևավորվել է առանձնաշնորհյալների ու արտոնյալների խավ: Սպառողի հոգեբանություն ունեցող բոլոր մեծ ու փոքր պաշտոնյաներն այսօր չարիք են Արցախի Հանրապետության համար: Չպետք է պաշտոն ունենան այն մարդիկ, որոնք չունեն հանրային ու ազգային շահի գիտակցում: Այսպես պետական բոլոր պաշտոնյաները հիմնականում մշակել են զգուշավորության վարքային ստրուտեգիա: Սոցիալական ցանցերում մարդիկ բաժանվել են թիմերի ու խմբերի: Եվ ցավա-

լին այն է, որ այդ խմբավորումների հետևում ևս մարդկանց խիստ անձնական և ոչ թե հանրային ու ազգային շահն է: Իրավամբ, ապրում ենք դժվար իրավիճակներ: Օրերս Մանվել Գրիգորյանի անձի հետ կապված քրեական բացահայտումներն ուղղակի ցնցեցին հայությանը: Այստեղ կա հերոսի անկման խորը հոգեբանական երևույթ, որից ծնունդ է առնում հակահերոսը: Հերոսները ծնվում են, իսկ նրանք, ովքեր թագարվել են հենց այնպես, ունենում են այսպիսի ավարտ: «Թագադրված» բոլոր պաշտոնյաներն էլ իրենց կիսաաստված են զգում, հետևապես իրենք թույլ են տալիս ամեն ինչ, քանի որ ամենակարողության զգացումը հոգեբանական օրինաչափությունից սկիզբ է առնում: Կոչումների նկատմամբ շռայլությունից սկիզբ է առնում հասարակության բարոյական անկումը: Բարձր կոչումներն այլևս դակում են բոլոր նրանց ներսը, ովքեր արժանի չէին դրան, բայց ստացել են: Սա հոգեբանական պարզ օրինաչափություն է: Զգուշ պետք է լինել հատկապես ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ կոչումը տալիս, որպեսզի չառնչվենք հերոսների սարսափելի անկմանը, որը քայքայում է մարդկանց արժեքանակարգը: Պետական պարզևները պետք է տրվեն ոսկերչական ճշգրտության սկզբունքով, այլապես սկսվում է

մուտանտ արժեքների տարածումը: Այսպես մենք չենք կարող առողջ միտք և վարք ունեցող սերունդ կան հասարակություն ունենալ: Կոչումների ու պարզևների հանձնումն ազդում է մեր հանրային վարքի վրա: «Ալիսը հրաշքերի աշխարհում» հեքիաթում բանալին անհետանում է, բայց այսօր ստեղծված իրավիճակի համար կա հանգուցալուծման բանալի ճշմարտության պահպանումը: Նայեք ձեր ներսը: Փոխեք ձեզ՞ մեծից փոքր, փոքրից մեծ: Առանձնացրեք ձեր անձնական ու հանրային շահը: Պետական պաշտոնը մի ծառայեցրեք ձեր խիստ անձնական կարիքներին: Հասարակությունը բարոյալքվում է դրանից, հասարակությունը հիվանդանում է դրանից: Որտեղ կա անխնա վերաբերմունք պետական ինչքի նկատմամբ, այնտեղ կա արժեքների գանգվածային փչացում: Այնտեղ ուղղորդող գաճաճ արժեքներն են: Մեր ժողովուրդը պատվի ժողովուրդ է: Նրա նկատմամբ ոսկերչական պետք է լինի պետական համակարգի մշակած ռազմավարությունը:

Լուսինե ՂԱՐԱՍԼՆՅԱՆ
ԱՅ կրթության, գիտության և սպորտի նախարարության մասնագիտական կրթության բաժնի պետ, հ.գ.թ., դոցենտ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՐԺԵՎՈՐՄԱՆ ՆՐԱՍԱՅԱԿԱՆ

Կրթության զարգացմանը նպաստող, թերևս, ամենակարևոր փոփոխականը երկրի մթնոլորտն է, գերիշխող արժեքային համակարգը: Անկախության տարիներին Հայաստանում արմատավորված վայրի կապիտալիզմը կրթությունը մղեց լուսանցքային գոտի: Հատկապես տղաները հաճախ են ասում՝ ինչո՞ւ են սովորում, եթե բազմաթիվ մարդիկ առանց կրթություն ունենալու հարստանում են և պաշտոն ստանում: Այս տարիների ընթացքում տարբեր ազդեցիկ պաշտոններում հայտնված, հարստացած, բայց ցածր կրթական ցենզ ունեցող մարդիկ շատ բացասական ազդեցություն ունեցան երեխաների սովորելու մոտիվացիայի վրա՝ դառնալով սխալ օրինակ:

Հիմա ունենք հնարավորություն երկրի վիճակը շտկելու: Մանվել Գրիգորյանի հետ կապված բացահայտումները շատ լավ նախադեպ են, որպեսզի ծնողները, ուսուցիչները, զանգվածային լրատվամիջոցները երեխաներին բացատրեն, համոզեն, որ կրթությունը շատ ավելի մնայուն կապիտալ է, քան նյութական հարստությունը: Ի վերջո, ցանկացած պսիխոլոգի և գրկվել նյութական հարստությունից, պաշտոնից, բայց կրթական կապիտալը ոչ ոք չի կարող խլել քեզանից: Հայաստանում խնդիր ունենք երեխաներին համոզելու, որ չափավոր ապրելակերպը՝ զուգակցված հարուստ ներաշխարհով, շատ գնահատելի է:

Կարելի է ասել, որ Հայաստանում կրթության արժեզրկումը շատ առումներով պայմանավորված է կեղծիքի ու խաբեության

առկայությամբ: Ապրիլյան պատերազմի օրերին բազմաթիվ երեխաներ նամակներ են գրել զինվորներին՝ նրանց շնորհակալություն հայտնելով և քաջալերելով: Բայց պարզվում է՝ մեծերն արհամարհել են երեխաների անկեղծ բարեմաղթաբեքները՝ դրանք չհասցնելով զինվորներին: Եվ այս արարքը կապվում է մի մարդու հետ, ում անունը նշված է Հայոց պատմության դասագրքերում որպես Արցախի հերոս: Կարելի է պատկերացնել, թե ինչ են զգում երեխաները, երբ տեղեկանում են, որ դասագրքում որպես հերոս ներկայացված մարդը իրենց ուղարկած սնունդը, հագուստը և նամակները զինվորներին հասցնելու փոխարեն պահել է իր ամառանոցում:

Ի հարկե, Մանվել Գրիգորյանի հետ կապված բացահայտումներն զգայաջուց են, բայց դրանք եզակի չեն: Մեկ տարի առաջ առիթ ունեի ներկա գտնվել սովորական մի դպրոցի «Հասարակագիտություն» առարկայի դասին: Խոսվում էր ժողովրդավարության, ազատ ընտրությունների, օրենքի գերակայության մասին: Ուսուցիչը հայտնվել էր ծանր վիճակում, քամի որ աշակերտները փորձում էին հիմնավորել, որ այն, ինչ գրված է դասագրքում, շատ հեռու է հայաստանյան իրականությունից: Երեխաները խոսում էին այն մասին, որ մեծերի աշխարհում կեղծիքն ու խաբեությունը շատ է: Թեև ուսուցիչը փորձում էր համոզել, որ ժամանակի ընթացքում խնդիրներ կլուծվեն, բայց աշակերտները դասից դուրս եկան այն համոզմամբ, որ սուտն ու կեղծիքը գրեղ են:

Կեղծիքի մեկ այլ դրսևորում է թվանշանը: Այս օրերին բազմաթիվ աշակերտներ, ուսանողներ ստանում են քննական թվանշաններ՝ շատ լավ հասկանալով, որ դա իրենց իրական գնահատականը չէ: Ավելին, ունենք դեպքեր, երբ ուսուցչի մոտ մասնավոր պարագր երեխան ստանում է չիմնավորված բարձր գնահատական: Իսկ ծնողը, փոխանակ մտահոգվելու երեխայի իրական գիտելիքների մակարդակով, կարևորում է կեղծ թվանշանը: Հասկանալով, որ կեղծիքը գործուն տեղ ունի կրթության համակարգում՝ սովորողներն էլ իրենց հերթին են դիմում կեղծիքների: Ուսուցիչները բարձր գնահատականներ են նշանակում աշխատանքների համար, որոնք երեխան ինքը չի կատարել: Օրինակ՝ դպրոցներից մեկում «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցիչն ավելի բարձր էր գնահատել այն աշխատանքը, որը կատարել էր աշակերտի մորաքույրը: Իսկ ինքնուրույն աշխատած աշակերտն ավելի ցածր գնահատական էր ստացել: Նույն վիճակն է քննությունների, կուրսային աշխատանքների և թեզերի պարագայում, երբ արտագրող կամ պատրաստի աշխատանք գնող սովորողն ավելի բարձր գնահատական է ստանում, քան ինքնուրույն գրողը:

Կեղծիքների այս շարքը կարելի է շարունակել: Ստեղծված իրավիճակում լուծումը վերահսկողության ուժեղացումը չէ: Հաճախ վերահսկողություն ուժեղացումը բերում է կեղծիքների էլ ավելի խորացման: Լուծումը

կրթությունն արժեզրկված, կեղծիքներով լեցուն վիճակից դուրս բերելու է: Դուք կարող եք հիանալի ուսումնական ծրագրեր գրել, աշխատավարձ բարձրացնել, ուսուցիչներին մասնագիտական որակը բարձրացնել, բայց այդ ամենը ոչ մի էական փոփոխություն չբերի: Առաջին քայլը, որ պիտի անենք, կրթության նկատմամբ հարգալից հանրային վերաբերմունքի ձևավորումն է: Կրթությունը պետք է դուրս բերենք լուսանցքային վիճակից և դարձնենք հանրային հոգատարության թեմա: Պետք է մեր պետական համակարգում տեղ չունենան անկիրթ մարդիկ, եթե նույնիսկ այս կամ այն ճանապարհով ձեռք են բերել դիպլոմներ: Երեխաները պետք է տեսնեն, որ Հայաստանում կիրթ մարդու հանդեպ կա ակնածանք: Երեխաները պիտի տեսնեն, որ մեծերը չեն արհամարհում իրենց գրած նամակները՝ դրանք պահելով կենդանիների սննդի պահեստում: Երեխաները պիտի զգան, որ մեծերն իրենց չեն խաբում: Միայն այս քայլերի դեպքում նրանց մոտ կառաջանա սովորելու ձգտում, և մենք կկարողանանք քայլ առ քայլ վերածնել մեր կրթական համակարգը: Հիմա կրթությունը վերաբժարելու հարմար պահ է, որը բաց թողնելու իրավունքը չունենք:

Սերոբ ԽԱԶԱՏՐՅԱՆ
Կրթության փորձագետ

ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵՐ ԿՐԹՕՋԱԽՆ

(հիմնական տեղեկությունները՝ ըստ պատմաբան Սլավա Սարգսյանի)

Դեռևս 1870 թվականին էր, որ Խնապատ գյուղում բացվում է նախակրթարան՝ 15 աշակերտով: 1884թ. գյուղացիները խնդրագիր են ուղարկում կաթողիկոսին՝ գյուղում եկեղեցական-ժխական դպրոց բացելու խնդրանքով, որն էլ նույն թվականին բացվում է՝ ունենալով 32 աշակերտ: Ուսուցիչն էր Տեր-Խաչատուր քահանան:

1885թ. Շուշիի գավառապետ Դուբրովսկին հրաման է արձակում փակել հայկական դպրոցները Արցախում: Վախենալով, որ հայոց պատմության և աշխարհագրության դասավանդումն աշակերտների մոտ պետության վերականգնման հույսեր կարծեսցնի: Տասը տարի (1896-1906թթ.) Հայաստանում և Արցախում փակվել են դպրոցները՝ բացառությամբ մասնավոր տներում գաղտնի գործող կրթարանների:

Խնապատում վերաբացվել է 1908 թվականին: Դպրոցը եղել է միդասյա երկսեռ. ուներ երկու բաժանմունք՝ 58 աշակերտով, որից 15-ը՝ աղջիկ: Ուսուցիչը Էջմիածնի Գևորգյան ճեմարանի շրջանավարտ Տեր-Արիստակես Բաղալյանն էր: Այստեղ էին հաճախում նաև հարևան Դիժբաղի երեխաները:

1910-1911թթ. դպրոցն ուներ 66 աշակերտ, 1917թ.՝ 78 աշակերտ, երեք բաժանմունք և երկու ուսուցիչ: Կրթօջախը գոյատևում էր բաքվարձակ խնապատցիների Հայրենակցական միության նպաստով (տարեկան 120 ռուբլի): Ուսուցումը ծրի էր:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո փոխվում է դպրոցի կարգավիճակը: 1925թ. այն տարրական էր, 1928-ից յոթնամյա: Տարրականի ժամանակ դպրոցի վարիչներից հիշատակվում են հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Ամիրջան Ջաքարյանի (Նորագյուղից), ռուսաց լեզվի ուսուցիչ Հակոբ Սարգսյանի անունները: 1925թ. աշակերտների թիվը հասնում էր 150-ի:

1932-35թթ. յոթնամյա դպրոցի տնօրենը պատմության ուսուցիչ Գուրգեն Հովհաննիսյանն էր (խճճրիստանից), աշակերտների կարգապահությունը ու առաջադիմությունն էլ շատ բարձր էր:

1927 թվականից գործում էր նաև «շրջիկ» դպրոց առանց տարիքային սահմանափակման, անգրագիտությունը վերացնելու նպատակով:

1938 թվականին յոթնամյա դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Ազիզբեկ Հակոբյանը նամակով դիմում է Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Միրջաֆար Բազիրովին՝ գյուղում 8-րդ դասարանը բացելու խնդրանքով, որպեսզի Ասկերանի ձորակի կամ մերձակա բնակավայրերի մոտ վեց տասնյակ յոթնամյա կրթությամբ շրջանավարտները հնարավորություն ունենան շարունակել կրթությունը:

Տրվում է համաձայնությունը, և նույն տարում էլ բացվում է 8-րդ դասարանը, այնուհետև՝ 9-րդ և 10-րդ դասարանները, և Խնապատի դպրոցը վեր է ածվում միջնակարգի՝ 1940-41 ուստարոմ տալով առաջին շրջանավարտները: Դպրոցի առաջին տնօրենն էր Լևոն Հովսեփյանը Գորիսի շրջանի Տեղ գյուղից, պատմաբան: Գյուղում նա մեծ հեղինակություն էր վայելում: Նրան հաջորդել են Անդրանիկ Ավագյանը, Հանո Քարամյանը (Նորագյուղից), Միքայել Առստամյանը (Քյաթուկից): Այդ տարիներից սկսած՝ դպրոցում ուսանում էին շրջակա գոթթե բոլոր բնակավայրերի (Նորագյուղ, Դիժբաղ, Քանազուխ, Խրամորթ, Նախիջևանիկ, Փիրջամալ, Ասկերան)յոթնամյա կրթությամբ շրջանավարտները, շուրջ 360 աշակերտ: Այսպես մինչև 1967-68 ուստարին, երբ Ասկերանի դպրոցը դառնում է միջնակարգ:

1954-1961թթ. դպրոցը ղեկավարում է նորագյուղցի Արշավիր Գալստյանը, որի

օրոք դպրոցը թեքվեց դեպի գյուղատնտեսություն (դպրոցամերձ ընդարձակ հողատարածքները դպրոցականների ուժերով վերածվեցին խաղողի այգիների):

1961թ. դպրոցի տնօրեն է նշանակվում Գյոզալ (Գայյա) Բաբայանը, որի օրոք բազում հաջողություններ արձանագրվեցին ուսման բնագավառում: Խնապատի միջնակարգ դպրոցը ճանաչվեց լավագույնը ԼՂԻՄ-ի տարածքում և լավագույններից մեկը՝ Ադրբեջանում: Ուսուցիչները զբաղվում էին ոչ միայն կրթադաստիարակչական գործունեությամբ, այլև ակտիվորեն մասնակցում էին գյուղական կյանքի բազմաբնույթ հարցերի լուծմանը, իսկ առանձին մանկավարժներ շրջանային և մարզային մակարդակի ակտիվ հասարակական գործունեություն էին ծավալում: Ի դեպ, Խնապատի միջնակարգ դպրոցը համարվում էր շրջակա գյուղերի դպրոցների մեթոդավորման կենտրոնը, որ-



տեղ հավաքվում էին Խրամորթի, Քանազուխի, Սարդարաշենի, Ասկերանի և Նորագյուղի դպրոցների ուսուցիչները և քննարկում ուսուցման բարելավման հետ կապված հարցեր, կատարում փորձի փոխանակում: Դպրոցն ուներ ինքնագործ գեղարվեստական խմբեր (երգի-պարի, մարզական), որ հաճախ էին հանդես գալիս հարևան գյուղերում, և ֆուտբոլի թիմ, որը միշտ առաջնային տեղեր է զբաղեցրել շրջանային մրցություններում. մասնավորապես 1965թ. դարձել է Դարաբաղի չեմպիոն: Թիմի լավագույն պաշտպանը Կոլյա Բաբայանն էր, որ հետագայում հաջողությամբ ավարտեց Երևանի ֆիզկուլտուրայի ինստիտուտը՝ հետագայում դառնալով այդ հաստատության դասախոսներից մեկը (այժմ դեկան է): Թիմի կազմում աչքի էր ընկնում նաև Բաբլեն Բեզլարյանը՝ որպես տեխնիկապես գրագետ, նուրբ փոխանցումների տիրապետող հարձակվող:

1966թ. նա ընդունվել և 1972թ. ավարտել է Երևանի պետհամալսարանի մեխմաթ ֆակուլտետը, աշխատել Երևանի հաշվիչ մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում, իսկ 1976-92թթ.՝ ՆԳ համակարգում: 1999թ. դեկտեմբերին նշանակվել է ֆուտբոլի առաջին խմբում հանդես եկող «Արմենիկում» ակումբի նախագահ, որը հետագայում վերանվանվեց «Փյունիկ»:

....Հայաստանի և Արցախի մարզական աշխարհում հայտնի է նաև «Ֆելչ» ՄՊԸ-ի նախագահ Բարսեղ Բեզլարյանը, որ ներկայումս միաժամանակ զբաղեցնում է ՀՀ շախմատի ֆեդերացիայի փոխնախագահի և ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի գործկոմի անդամի պաշտոնները:

Գայյա Բաբայանը, լինելով գյուղի անգրագիտության վերացման կոմիտեի նախագահ, մեծ աշխատանք է տարել այդ ուղղությամբ: Նա միաժամանակ քաղաքակրթական աշխատանքներ էր վարում դպրոցում և գյուղում: 1964թ. Գ. Բաբայանը պարգևատրվել է «Լուսավորության գերագանցիկ» կրծքանշանով, 1966թ.՝ Լենինի շքանշանով, իսկ 1970-ին՝ Լենինի ծննդյան հարյուրամյակի հոբելյանական մեդալով:

1978թ. գյուղում ավարտվում է դպրոցական նոր (տիպային) շենքի կառուցումը, և սեպտեմբերի 1-ից պարապմունքները տարվում են նոր շենքում: Մանկավարժական կոլեկտիվն ու դպրոցականները վերջապես հրաժեշտ են տալիս 1910թ. կառուցված բժիշկ խաչատուր Բահաթրյանի նախկին վիլլային: Դպրոցն անցնում է կաբինետային համակարգի՝ համապատասխան բարձրորակ կահավորանքով: Եռանդուն մանկավարժների ջանքերով շատ կարճ ժամանակահատվածում դպրոցում ստեղծվում են հայոց լեզվի և գրականության, մաթեմատիկայի, ռուսաց լեզվի, ֆիզիկայի օրինակելի կաբինետներ, որ ճանաչված էին Դարաբաղի սահմաններում:

1960-80-ական թվականներին բուհ դիմող դպրոցականների մեծ մասը բնագիտամաթեմատիկական մասնագիտական ուղղվածություն ուներ. բանիմաց ու հմուտ մանկավարժների շնորհիվ շրջանավարտներն այդ ոլորտն էին ընտրում:

1980 թվականին Գայյա Բաբայանի անժամանակ մահից հետո դպրոցի տնօրեն է նշանակվում Ջավեն Բեզլարյանը, որը մինչ այդ փոխտնօրենի պաշտոնում էր աշխատել: Նա իր անձնվեր աշխատանքով դառնում է նախկին տնօրենի արժանի հետնորդը, ավելի բարձրացնում դպրոցի վարկն ու անունը՝ ճանաչում ու բարի համբավ բերելով կրթօջախին:

1988-ից դպրոցի մանկավարժներն աշխատում էին երկու ճակատով. ա) մատաղ սերնդի կրթություն ու դաստիարակություն, բ) մասնակցություն միտինգներին, ժողովներին, ազգային-ազատագրական պայքարին: Տղամարդ ուսուցիչները ժամանակ շատ էին նրանք՝ յոթ հոգի՝ հերթապահում էին գյուղամերձ տարածքներում և արհեստանոցում ինքնաշեն հրացաններ ու նռնակներ պատրաստում: Այս գործում գլխավոր դերը պատկանում էր դպրոցի զինղեկ Արթուր Հայրապետյանին, որը ռազմական կրթություն ուներ և իր շուրջն էր համախմբել մյուս տղամարդկանց:

Ցավոք, Արցախյան պատերազմում զոհվեցին ուսուցիչներ Արթուր Հայրապետյանը, Սլավա Մելքունյանը և Վերա Ասրոզյանը:

1991-92 ուստարվա մի քանի ամիսների ընթացքում դպրոցական շենքի մի թևը տրամադրվում է խորհրդային ներքին գործերի նախարարության բարձրագույն ուսումնական հաստատությունների մի քանի կազմավորումների: Երբ 1992-ի մարտին Արցախից դուրս բերվեցին խորհրդային այդ գորամիավորումները, դպրոցի շենքը թիրախավորվեց հակառակորդի կողմից և գնդակծովեց: Տարիանվեցին կանայք և երեխաները ավելի ապահով վայրեր:

1992թ. օգոստոսի 2-ին 60 դպրոցականներ՝ ռուսաց լեզվի ուսուցչուհի Ջուլիետա Մելքունյանի գլխավորությամբ, տեղափոխվեցին ՀՀ Արթիկ քաղաք և 7 ամիս ուսումը շարունակեցին քաղաքի հ.1 և հ.5 դպրոցներում:

Գյուղի դպրոցում պարապմունքները շարունակել հնարավոր չէր (շատ ծանր էին այդ տարիները): Բայց դպրոցի տնօրեն Ջավեն Բեզլարյանի և գյուղում մնացած ուսուցիչների համառ ու քրտնաջան աշխատանքի շնորհիվ ուսումնական գործընթացը 1992-93 ուստարում կազմակերպվեց գյուղի կուլտնետության վարչության շենքում: Հաճախ էին պարապմունքները ընթանում ու ընդհատվում ռմբակոծությունների, հրետակոծությունների, ականների պայթյունների պայմաններում, բայց չէին դադարում:

1993թ. հուլիսին Ալմայի (Աղղամ) մարտական գործողությունների հաջող ավարտից հետո աշխատանքներ տարվեցին կիսաբանող դպրոցի վերանորոգման համար: Պետական ծրագրի շրջանակներում

դրում դպրոցաշինության գործընթացին զուգահեռ դպրոցի կարիքները հոգալու համար ձեռք են մեկնում նաև կրթօջախի նախկին շրջանավարտներ Բարսեղ Բեզլարյանը, Սերգեյ Գրիգորյանը, Շիրին Հակոբյանը, Հրայր Հովսեփյանը և ուրիշներ: 1993-94 ուստարվանից պարապմունքները կազմակերպվեցին հարազատ դպրոցի շենքում, որ դեռ երկար տարիներ կրելու էր պատերազմի վերքերը:

1997թ. մայիսի 31-ին դպրոցն անվանակոչվեց հետմահու «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանի ասպետ, դպրոցի զինղեկ Արթուր Հայրապետյանի անունով, իսկ Բարսեղ Բեզլարյանի միջոցներով դպրոցում կառուցվեց հուշանկունը՝ ի պատիվ զոհված ազատամարտիկի:

Խնապատի միջնակարգ դպրոցում դաստիարակվել, կրթվել ու աշխատանքային փորձ են ձեռք բերել վաստակաշատ մանկավարժներ, գիտության ու մշակույթի գործիչներ, ժողտնտեսության մասնագետներ, որոնք ամենուր բարձր են պահել հայրենի կրթօջախի անունն ու պատիվը. Հակոբ Սարգսյան, Վահան Հովհաննիսյան, Ազիզբեկ Հակոբյան, Մովսես Խաչատրյան, Սոնյա Մելքունյան, Գուրգեն Հովհաննիսյան, Վազգեն Սարգսյան, Վազգեն Գասպարյան, Լիդա Շահրամյան, Օհան Մուսայելյան, Մուշեղ Պետրոսյան, Նինա Սարգսյան, Բահաթուր Դավթյան, Մուշեղ Օհանջանյան, Արիստիտյան, Արմո Շատուրյան, Միքայել Շահրամյան, Արկադի Հայրապետյան, Ալբերտ Խաչատրյան, Կոլյա Բաբայան, Ալեքսանդր Խաչատրյան, Սամվել Գաբրիելյան, Սերգեյ Գրիգորյան, Փաշա Օհանջանյան, Բենիկ Բեզլարյան, Ալյոշա Գաբրիելյան և այլք:

1990թ. դպրոցում սովորում էր 158 աշակերտ, աշխատում՝ 26 ուսուցիչ, այսինչ՝ 1980թ. աշակերտների թիվը 170-ից ավելի էր, 2001-ին՝ 190, որից 15-ը՝ նախապատրաստական խմբում:

Դպրոցը 1988-2015թթ. ընթացքում տվել է 318 շրջանավարտ, որից 14 հոգի՝ ոսկե և արծաթե մեդալակիրներ: 2013թ. Խնապատի միջնակարգ դպրոցը «Տարվա լավագույն դպրոց» մրցութուն հաղթող է ճանաչվել «Ուսուցման կաբինետային համակարգին անցնելու համար» անվանակարգում՝ արժանանալով պատվոգրի ու երեք հարյուր հազար դրամական պարգևի:

2013թ. տեսչական ստուգումների ժամանակ առանձին առարկաների (տարրական դասարաններ, հայոց լեզու, մաթեմատիկա, ռուսաց լեզու) ուսավանդման որվածքը գնահատվել է «լավ»:

Գրանցված բոլոր հաջողությունների արդյունքում Խնապատի միջնակարգ դպրոցի տնօրեն Ջավեն Բեզլարյանը ԼՂՀ կառավարության կողմից 2013թ. արժանացել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչման:

Կրթօջախը բարեկամական կապեր է ունեցել Հաղորթի շրջանի Ազդիսի (1998-99), ՀՀ Նոյեմբերյանի շրջանի Պտղավանի (1999-2000) միջնակարգ դպրոցների, Գյումրիի մանկավարժական համալսարանի (2012) հետ:

Դպրոցականներն ակտիվորեն մասնակցում են «Մեղու», «Կենզուրու» մրցույթներին, «Թունու»-ի կրթական ծրագրին:

2015թ. սեպտեմբերի 1-ից Խնապատի միջնակարգ դպրոցը ղեկավարում է Լյուդմիրա Մոսիսյանը՝ 23 ուսուցիչներով և 12 տեխաշխատակիցներով: Գործում է 12 դասարան-կոմպլեկտ՝ 112 աշակերտների ընդգրկմամբ: Մանկավարժական կոլեկտիվը համարված է հիմնականում երիտասարդ կադրերով:

Դպրոցում է տեղակայված նաև մանկապարտեզը՝ 48 երեխայի ընդգրկմամբ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՔԻՉ ԽՈՍԵՆԷ, ՇԱՏ ԳՈՐԾԵՆԷ



- Ինչպե՞ն ծանոթացաք բռնցքամարտի հետ:

- Մանկությունից սեր ունեի դեպի այդ կենսական մարզածելը: Բռնցքամարտի պարապմունքների սկսել են հաճախել տասը տարեկանից: Այդ ժամանակ ընտանիքով ապրում էինք ՌԴ Ստավրոպոլ քաղաքում: Չնայած այն հանգամանքին, որ ծնողներս այդքան էլ չէին ողջունում իմ ընտրությունը՝ հաշվի առնելով բռնցքամարտի կոպտությունն ու վնասվածքավտանգությունը, ինքս այնուամենայնիվ կռավարար բնավորություն ունեի եւ համառ նպատակասլացություն, այնպես որ նույնիսկ ծնողներիս հորդորները չէի լսում: Պարապետով ավելի ու ավելի էի համոզվում, որ բռնցքամարտը այն է, ինչ ինձ պետք է: Աստիճանաբար կոփվելով՝ սկսեցի մրցաշարերի մասնակցել: Պատահում էր, որ չէի հաղթում ինձանից ավելի ուժեղ մրցակիցներին, պատահում էր, որ վնասվածք էի ստանում, բայց երբեւէ նահանջելու միտք աճած չեմ ունեցել:

- Նարեկ, լինելով ՌԴ քաղաքացի, բազմիցս բռնցքամարտել եք որպես այդ երկրի ներկայացուցիչ, Ստավրոպոլի երկրամասի բռնցքամարտի եռակի չեմպիոն եք, Դարավային Դաշնության վարչաշրջանի Ֆինալիստ: Ինչո՞վ էր պայմանավորված Չերկոսից ՌԴ քաղաքացիությունը հանձնելն ու Արցախ վերադառնալը:

- Նշեմ, որ արմատներով արցախցի եմ, ծնվել եմ Արցախում: Արցախյան գոյապայքարի տարիներից հետո՝ 1996 թվականին ընտանիքով տեղափոխվեցինք Ռուսաստան: Մինչդեռ բռնցքամարտել եմ ոչ միայն ՌԴ բռնցքամարտիկների խմբում, այլ նաեւ ԳՖ հավաքականի կազմում: Տեսնելով, որ այս մարզածելը համաշխարհային ճանաչում ունի, ես ու եղբայրս, որը նույնպես բռնցքամարտիկ է, որոշեցինք հանձն առնել Արցախում բռնցքամարտը տարածելու եւ մասսայականացնելու գործընթացը: 2010թ. ընտանիքով հանձնեցինք ՌԴ քաղաքացիությունը եւ վերաբնակվեցինք Արցախում: Արցախում զինվորական ծառայությունն անցնելուց հետո մարզական գործով սկսեցի զբաղվել՝ հնարավորություն ընձեռելով արցախցի մարզիկներից պարապել բռնցքամարտով, համարակարգելով բռնցքամարտով, համարակարգելով բռնցքամարտով եւ երկրից դուրս անցկացվող մրցույթներում: Նպատակը մեկն է՝ եթե ճանաչվեմ մեր մարզիկները միջազգային ռինգում, որի նախարարյալները, ի դեպ, կան, ապա կծածանվի մեր դրոշմը, կճանաչվի մեր հանրապետությունը համաշխարհային հանրության կողմից:

բռնցքամարտը աշխարհում ամենատարածված մենամարտերի տեսակներից է: Այս մարզածելը հանրահայտ է Ամերիկայում, Անազիլիայում, Գերմանիայում, Ռուսաստանի Դաշնությունում, Ուկրաինայում, որտեղ էլ ծնվել են աշխարհի ամենահայտնի բռնցքամարտիկները՝ Կլիշկո եղբայրները, Սոհամեդ Ալին, Մայք Թայսոնը եւ ուրիշները:

Բռնցքամարտը այնպիսի մարզածել է, որտեղ միանման քաշային կարգում երկու մասնակից գրոհում են իրար բռուցքների օգնությամբ (հատուկ ձեռնոցներով), ռաունդ կոչվող մի քանի փուլով:

Արցախում բռնցքամարտն անցնում է զարգացման փուլերը, ինչի մասին զրուցեցինք Ասկերանի մարզադպրոցի բռնցքամարտի մարզիչ, սպորտի վարպետ Նարեկ ԱՔՐԱՍՅԱՆԻ հետ:

յությունն անցնելուց հետո մարզական գործով սկսեցի զբաղվել՝ հնարավորություն ընձեռելով արցախցի մարզիկներից պարապել բռնցքամարտով, համոզեա գալ Դայաստանում եւ երկրից դուրս անցկացվող մրցույթներում: Նպատակը մեկն է՝ եթե ճանաչվեմ մեր մարզիկները միջազգային ռինգում, որի նախարարյալները, ի դեպ, կան, ապա կծածանվի մեր դրոշմը, կճանաչվի մեր հանրապետությունը համաշխարհային հանրության կողմից:

- Դանդիսանալով Ասկերանի մարզադպրոցի մարզիչ՝ Դուք նաեւ բռնցքամարտի խմբեր ունեք մայրաքաղաքում եւ Մարտակերտի շրջանի Կանք համայնքում: Ինչպե՞ն եք համադրում այդ պարապմունքները եւ ԻՊՇ խնդիրների հետ եք առնչվում:

- Երբ եկա Արցախ, ավելի մոտիկից այն ճանաչեցի: Արցախցիների մեջ մեծ ներուժ կա, որը զարգացնելու եւ նպատակային օգտագործելու ամիրաժեշտություն ունի: Իմ ասների մեջ կան հեռանկարային մարզիկներ, որոնց հետ բավականին դժվար ճանապարհ ենք անցնում: Բայց նաեւ նկատելի արդյունքներ կան: Կարծում եմ, որ Արցախում նոր զարգացող մարզածելերը, որոնց զարգացումը ի դեպ մարտավարական ու քաղաքական նշանակություն ունի երկրի համար, արժանի են ավելի մեծ ուշադրության: Կոնկրետ իմ դեպքում կենցաղային խնդիրներ կան: Ամենամեծը մշտական կացարանի խնդիրն է, առ այսօր ապրում եմ վարձակալած բնակարանում: Այն ժամանակն ու ռեսուրսները, որոնք կարելի է ես օգտագործել Արցախում մարզածելի զարգացմանն ի նպաստ, ստիպված եմ օգտագործելու կենցաղային հարցերը լուծելու համար: Աջակցության խոստումներ ստացել եմ սպորտի վարչությունից, բայց առայժմ վիճակն անփոփոխ է: Որպես մարզիչ ստանում եմ երեսուն հազար դրամ աշխատավարձ, պարապում եմ երեք խումբ: Պարապմունքները համադրելու, տեղաշարժս ապահովելու խնդիրները հոգալ ստացվում է շնորհիվ իմ

ասների ծնողներ Սամվել Պետրոսյանի եւ Սամվել Բեգլարյանի հովանավորությամբ: Աջակցություն եմ ստանում ԳՖ բռնցքամարտի հավաքականի գլխավոր մարզիչ Դավիթ Թորոսյանից:

- Չեր գնահատումա՞ք՝ ի՞նչ մակարդակում է բռնցքամարտը Արցախում:

- Արցախում բռնցքամարտը բարձր մակարդակի վրա է եւ շարունակում է զարգանալ: 2017-ի հուլիսին Մեծ բարերար Լեւոն Դայրապետյանին նվիրված մրցաշար կազմակերպեցինք Կանք գյուղում, որն անցավ բարձր մակարդակով: Մասնակցում էին բռնցքամարտիկներ Դայաստանից եւ Արցախից, իսկ մրցավարությունը միջազգային կարգի մրցավար Բագրատ Ավոյանն էր անցկացնում: Սերի հրավերով Արցախ էր եկել նաեւ 2017թ. եվրոպայի չեմպիոն, հանրահայտ բռնցքամարտիկ Դովհաննես Բաչկովը եւ իր ներկայությամբ պատվել մրցաշարն ու ոգեւորել մարզիկներին: Մոտ երկու ամիս առաջ մեր մարզիկները մասնակցեցին ԳՖ բռնցքամարտի առաջնության եւ հիանալի արդյունքներ դրսևորեցին: Դանդես գալով տասնչորս մենամարտում՝ Արցախի թիմը ներկայացնող հինգ մարզիկից երեքն արժանացան առաջին, երկրորդ եւ երրորդ մրցանակային տեղերի եւ պարգևատրվեցին մեդալներով: Իսկ Բուլղարիայի Ալբենա քաղաքում կայացած բռնցքամարտի եվրոպայի առաջնությունից իմ սան, 14-ամյա Մանվել Պետրոսյանը բրոնզե մեդալով է վերադարձել: Մանվելը երեք մենամարտ է ունեցել, առաջին երկուսում փայլուն դրսևորել է իրեն: Դատանշական է, որ բացարձակ առավելությամբ հաղթանակ է տարել բուլղարացի մարզիկի հանդեպ: Երրորդ մենամարտում զիջել է ռուս մրցակցին: Սա առաջին, բայց հույսեր կան, որ ոչ վերջին դեպքն է, երբ արցախցին իր՝ բռնցքամարտ մարզածելին տիրապետելու բարձր մակարդակով խոսել է տալիս իր եւ իր հայրենիքի մասին եվրոպայում: Մանվելը ԳՖ հավաքականի կազմում մեդալ նվաճող միակ մարզիկն է: Մանվել Պետրոսյանը Մարտունու շրջանի Քեթր համայնքից է, մարզվում է Ասկերանի մարզադպրոցում: Նրա օրինակով մյուս մարզիկների հոգեբանությունն էլ է փոխվում, սովորում են հաղթահարել դժվարությունները, չնստանալ անբարենպաստ պայմանների առջեւ, կոփվել եւ դուրս գալ միջազգային ապարեզ՝ բարձր պահելով Արցախի պատիվը:

- Անդհամուր առմամբ, ո՞նե համար է բռնցքամարտը:

- Միանշանակ կարող եմ ասել, որ այն ոչ բոլորի համար է: Նախեւառաջ նրանց համար է, ովքեր ունեն ներքին մղում, ամուր ներքին հենակ, բնատուր տաղանդ: Բռնցքամարտելը ցանկալի է սկսել տաս-տասնմեկ տարեկանից: Պատահում է, որ ծնողները երեխային բերում են ավելի վաղ հասակում: Մենք հնարավորություն ենք տալիս, որ երեխան նայի

պարապմունքը, ֆիզիկական թեթևակի ծանրաբեռնվածությամբ վարժություններ ենք կատարում, խաղային բնույթի պարապմունք ենք անցկացնում, բայց բռնցքամարտի տեսնիկան մատուցում ենք ավելի ուշ: Օրինակ, վեց-յոթ տարեկանում երեխայի գիտակցությունը դեռես պատրաստ չէ տեսնիկան յուրացնելու, ուստի երեխային պետք չէ զրկել մանկությունից:

- Իսկ այն դեպքերում, երբ անհրաժեշտ է երեխային կոփել ֆիզիկապես եւ հոգեպես՝ նպատակ չունենալով նրան չեմպիոն դարձնել, արդյոք, նպատակահարմա՞ր է այդ երեխային բռնցքամարտի խմբակ անդամադրել:

- Գիշտն ասած, այդ հարցով շատ ծնողներ են ինձ մոտենում: Ես փորձում եմ մնալ երեխաների հետ առանձին աշխատել, հնարավորություն տալ նրանց հոգեբանական եւ ֆիզիկական վարժությունների միջոցով վեր հանել իրենց ներուժը: Սակայն եթե բնատուր հակումը դեպի բռնցքամարտ այնքան էլ զարգացած չէ, ես խորհուրդ եմ տալիս այդ երեխային այլ մարզածելով պարապել: Բռնցքամարտը համարձակ, ուժեղ, դիմացկուն եւ կայուն հոգեբանական գծեր ունեցող մարզկանց համար է: Մեր մարզիկների մեջ էլ պատահում են այնպիսիները, որոնք սկզբնական շրջանում վախենում են անգամ բռնցքամարտի ծեռնոցից, բայց ժամանակի ընթացքում կարողանում են հաղթահարել վախը: Բերեմ օրինակն իմ սանի, որն այժմ զինվորական ծառայություն է անցնում: Սկսել է տասներկու տարեկանից, մոտ յոթ տարի պարապել է բռնցքամարտ, լավ հիշում ենք սպորտում նրա առաջին քայլերը, թե ինչպես էր պարապմունքի ժամանակ մենամարտելիս լացելով պայքարում մրցակցի հետ: Ես հասկանում էի, թե ինչ է կատարվում նրա հոգեկանում, նրա մեջ բախվում էին թույլ մարդը եւ ուժեղ մարդը: Եթե նա չունենար ներքին ամուր հենակը, որի մասին խոսվել է, ապա նա կկորսվեր, մինչդեռ նրա մեջ հաղթեց ուժեղ մարդը, նա դարձավ լավ բռնցքամարտող մարզիկ:

- Ի՞նչ ծրագրեր կան առաջիկայում:

- Ծրագրեր ու նպատակներ շատ կան: Աշխատում ենք այն ուղղությամբ, որ ձեւավորենք պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ մեր սաներից եւ մասնակցենք օլիմպիական մրցումների: Թող բոլորը հիանան, հպարտանան արցախցի բռնցքամարտիկով, որը կհաղթի ամենաուժեղ մրցաշարում: Դայրենիքում ես առաջնություններ կազմակերպելն ու շատ մարզիկներ ներգրավելն նպատակային է սպորտի զարգացման համար, բայց մենք ավելի մեծ նպատակներ ենք դնում մեր առջեւ՝ մեդալներ բերել համաշխարհային մրցաշարերից: Չեռնարկվում են կոնկրետ քայլեր, որոնց մասին նախընտրում են քիչ խոսել, շատ գործել:

Սոնյա ԱՎԱԳՏԱՆ

ՐԱԿԵՐԺ ՓԱՆԸ

*Ցավը խորն է, շահումյանցի,
Ախ չհասավ քո նավը,
Թե աշխարհում ցավ չունենամ,
Ինձ հերիք է քո ցավը...*

1992թ. հունիսի 13-ին երբեմնի ծաղկուն ու շեն Շահումյանը հայաթափվեց: Ազատամարտիկները կռվում էին անձնվիրաբար և փորձում կյանքի գնով պաշտպանել հայրենի հողը, բայց ավա՞ղ... պատմության մեջ գրանցվեց ևս մի չարաբաստիկ օր. մի ողջ շրջան հայաթափ եղավ:

Պատմությունը սովորեցրել է մեզ գտնել մեր չսպիացած վերքերի դարմանը, կորցրածը երբեք չմոռանալ, հնի փոխառեն նորը կառուցել: Ուստի և պատահական չէ, որ կորսված Շահումյանի փոխարեն ծաղկում է Նոր Շահումյանը, էրբեցի փոխարեն՝ Նոր էրբեջը, որտեղ մեծացող և դաստիարակվող սերունդը երբեք չի մոռանա իր պապենական գյուղը:

2013թ. Նոր էրբեջ գյուղում կառուցվեց հուշարձան՝ նվիրված Արցախյան պատերազմում զոհված էրբեջցի յոթ ազա-



տամարտիկների՝ մեկ անգամ և ցույց տալով թշնամուն, որ հայի ոգին երբեք չի կորսվի, ապացուցելով աշխարհին, որ մենք փյունիկի պես ազգ ենք և մեզ ծնկի բերել չի լինի:

Հուշարձանի բացումը տեղի ունեցավ հունիսի 13-ին՝ Շահումյանի անկման օրը: Եվ այդ օրվանից յուրաքանչյուր տարի ավանդույթ դարձած՝ էրբեջցիները տարբեր անկյուններից հավաքվում են և նորէրբեջցիների հետ միասին այցելելով հուշարձան՝ հարգանքի տուրք մատուցում Արցախյան գոյամարտում ընկած բոլոր հերոսների հիշատակին:

Այսօր բոլորիս պարտքն է խոնարհվել իրենց կյանքը հայրենիքի զոհաբեղանին դրած Սլավիկ Դանիելյանի, Կամիկ Լալայանի, Կամո Դովհաննիսյանի, Շուրիկ Խաչատրյանի, Կասակ Դովհաննիսյանի, Սաշիկ Մարտիրոսյանի, Աշոտ Դադյանի և բազմաթիվ այլ քաջորդաց սիրաճեղ ու հիշատակի առջև, ովքեր այսօր դարձան պատմություն, հուշարձան և լեգենդ:

Չավե՛րժ փառք Արցախյան ազատամարտում ընկած բոլոր հերոսներին:

**Սոֆի ՄԻՍԱԿՑԱՆ
ԱՅ Շահումյանի շրջանի Նոր էրբեջի Գ. Ջառահյանի անվան միջնակարգ դպրոցի ՍԴԱԿ**

ԳՐԱԿԱՆ ՆԱՅԱՔ

ՄԵՆՈՒԹՅԱՆ ՑԱԿԸ

Նվիրվում է բոլոր տառիկներին ու պատիկներին

Նորից մենակ մնացին իրենց ցավ ու դարդի մեջ։ Նորից մտալ իրականություն է աչքի առաջ գալիս ու դատարկվող բալկին նայելով՝ դատարկվում էր նրանց սիրտը ևս։

Երանի մի թռ լիներ իրենց կողքին, բարկացներ իրենց, հավերին քշեր, Չալոյին չարչարեր, միայն թե իրենց կողքն լիներ։

Բաժանումը միշտ էլ հուզիչ էր լինում, բայց այս անգամ այն կարծես ավելի սրտառուչ էր։ Միշտ իրենց պիճը պահող ծեր ամուսինները փշրվեցին, չկարողացան թաքցնել արցունքները։ Ծերությունն անգոր էր դարձնում նրանց։

Սիրան տատը մի դուլւ ջուր շարտեղ հեռացող ավտոների հետևից և դարպասները փակելով՝ ներս գնաց։ Դռան մոտից փոքրիկ ծռան շորը գտավ։ Համբուրեց, դրեց բարձի տակ։ Կարծես մի քիչ սիրտը տեղն ընկավ։

Առավոտյան Սիրան տատը բակում անհանգիստ շարժումներով հետ ու առաջ էր գնում, զգացվում էր, որ խիստ հուզված էր, վազելով մտավ հարևանի տուն և նույնքան արագ էլ հետ դարձավ։ Դեղի հետևից էր գնացել։ Արտաչ պապը լավ չէր։ Նա դողում էր ամբողջ մարմնով և անընդհատ «Սիրան» էր կանչում։ Կճոջ սիրտը վատ բան էր գուշակում։ Կյանքի դաժան ու տխուր, պայծառ ու համեղի օրերի իր միակ ընկերն օրհասական վիճակում էր։ Փորձում էր հանգիստ երևալ, բայց դողացող ձեռքերը մատնում էին նրան։ Հարևանին խնդրեց շուսալ երեխեքին գանգել...

...Աճցավ մի շաբաթ։ Սիրան տատը նստել էր բալկի մեծ քարի վրա ու գուլեղ գրեթե ծնկներին հասցրած՝ նվաղ ձայնով հեծկտում էր։ Մենակ մնաց, մեմ-մենալ։ Կողքին թուջուջ անող հավերն էլ կարծես զգում էին, թե ինչքան տխուր է իրենց միակ տերը և լուռ ու մուռնց հեռու էին գնում։ Ինչքա՜ն կուզեր կողքին լինել ամուսինը։ Վիճեր իր հետ, գոռար, միայն թե մենակ չլիներ։ Կյանքը միանգամից մռայլվեց, կորավ Սիրան տատի ծրագրությունը, մի օրվա մեջ ծերացավ, անգրազավ ու անպաշտպան երեխա դարձավ։

Միայնակ ապրելուն հարմարվելն այդքան էլ հեշտ չէր։ Չնայած երեխաները նրան մենակ չէին թողնում, բայց Սիրան տատը միշտ խուճապային տրամադրությամ մեջ էր լինում, ուր որ է՝ բոլորը կցնան, և նա կմնա մենության ու խավարի մեջ։ Գիշերներն ահավոր երկաթեցին, մտքերն ու քախիծը խեղդում էին նրան, չէր համաձայնվում քարաք գձալ։ Իր տունը, իր հավերին, իր Չալոյին ո՛ւմ թողնի, բալկի ամեն մի ծառ երեխայի պես էր խմանում, ինչպե՛ս թողներ նրանց անտեր ու տխուր ու թառեր հարյուրավոր շենքերից մեկում։

Ամիսներ անցան՝ տխուր, միօրինակ, անզույճ օրերով։

Լավ էր բարի հարևաններ կալին, լցնում էին նրա գորշ առօրյան։ Մի օր էլ Սիրան տատը մտքերի մեջ այգու ծառերից մեկն էր բարձրացել՝ խնձոր քաղելու, երբ ոտքը սայթաքեց, ու վայր ընկավ։

Մի պահ խավարեց ամեն ինչ, նրան թվաց այլևս ոտքի չի կանգնի, մի բանի ժամ ծաղի տակ մնալուց հետո ուշքի եկավ, զանգեց երեխաներին։

...Սիրան տատին մի կերպ ավտո էին ցատեցնում՝ համոզելով, խնդրելով, աղերսելով։ Արցունքները հոսում էին նրա աչքերից։

- Չե՛մ ուզում գալ, չե՛մ ուզում, չե՛մ ուզո՛ւմ իմ հավերին անտեր թողնել, իմ տունն ու այգին անտեր թողնել...

Գյուղը մնաց հետևում։ Իլդր-մուլոր ճամփաներով Սիրան տատը հեռանում էր գյուղից, որտեղից երբեք չի բացակա-

1

2

3

4

5

6

7

8

9

10

11

12

13

14

15

16

17

18

19

20

21

22

23

24

25

26

27

28

29

30

31

32

33

34

35

36

37

38

39

40

41

42

43

44

45

46

47

48

49

50

51

52

53

54

55

56

57

58

59

60

61

62

63

64

65

66

67

68

69

70

71

72

73

74

75

76

77

78

79

80

81

82

83

84

85

86

87

88

89

90

91

92

93

94

95

96

97

98

99

100

101

102

103

104

105

106

107

108

109

110

111

112

113

114

115

116

117

118

119

120

121

122

123

124

125

126

127

128

129

130

131

132

133

134

135

136

137

138

139

140

141

142

143

144

145

146

147

148

149

150

151

152

153

154

155

156

157

158

159

160

161

162

163

164

165

166

167

168

169

170

171

172

173

174

175

176

177

178

179

180

181

182

183

184

185

186

187

188

189

190

191

192

193

194

195

196

197

198

199

200

201

202

203

204

205

206

207

208

209

210

211

212

213

214

215

216

217

218

219

220

221

222

223

224

225

226

227

228

229

230

231

232

233

234

235

236

237

238

239

240

241

242

243

244

245

246

247

248

249

250

251

252

253

254

255

256

257